

դերորդ ու վեցերորդ գործողութիւնքը այնչափ անգամ կրկնելու է, ինչուան որ լաթը բոլորովին գունաթափի: Արնար մարդ քլորին ուժը աւելցնել և մէկ անգամ քլորաջրին մէջ թաթախելով ճերմկեցնել՝ կրկին և կրկին թաթախ մունքը զանց առնելով, թէ որ քլորին այրելուն վախը չըլլար:

— Է. Ետքի ճերմկութիւնը տալու է լաթին՝ գաղջ ու ամենաթեթեւ ծծմբ բային թթուաջրի մէջ՝ ձգելով զանիկայ, որով երկաթային ու կրային նիւթերը կ'ելան: Այսէ ետքը բազում մտադրութեամբ պէտք է լուանալ անոյշ ջրի մէջ. վասն զի թէ որ առանց լուալու չորցնես լաթը, ծծմբային թթուն կամ մաց կամաց կ'ուտէ թելերը ու կը փտեցնէ: Այն թշուառութիւնը կը պատահի թէ որ ասանկ թթու լաթը սառոյցի տակ մնայ:

Թէ որ կ'ուզես ասանկ ճերմկած լաթը ներկել, պէտք է որ նորէն ալքալեան ջրէ՝ անցնես, որով գոյնը քիչ մը կը դեղնի՝ բայց ներկին չփասեր: Բայց թէ որ չներկես պիտի՝ այլ ճերմակ պիտի պահես, ծծմբային թթու ջրէն հանելէդ ետքը նորէն քլորաջրով լուա՝, որով լաթին ճերմկութիւնը կ'ըլլայ ամենասպիտակ փայլուն:

Բայց այն լաթերն որ եղոտ չեն, ինչպէս են բարակ բեհեզները, յետագայ գործողութիւնքն ընդունելու են համառօտաբար. այսինքն Ա. եռացած ջրի մէջ ձգել զանոնք, Բ. ձմռելով լուանալ, Գ. արե դնել կամ թեթեւ քլորաջրի լողարանին մէջ քիչ մը ատեն թուղուլ, Դ. թեթեւ կրաջրի մէջ ձգել, Ե. ծծմբոյ թեթեւ թթուաջրի մէջ ձգել, և յետոյ անոյշ ջրով լուանալ: Այս ամեն գործողութիւնքը քիչ մը ատենի մէջ կը կատարուի, թէ որ այլ և այլ անգամ արե դնելու հարկաւորութիւն չըլլայ:

Փորձը ստուգեց, Ա. որ լաթը միակերպ երկու ժամու չափ թեթեւ կրաջրի մէջ եփուելով ամենեւին չփասուիր, միայն թէ լաթը եփելու ատեն ջրէն դուրս չմնայ, այլ միշտ ջրով ծածկած

ըլլայ: Բ. Լաթը ստալի լողարանին մէջ (խտութիւնը 1,015) և տասը մը թնոլորտի ճնշման տակը կենալով՝ ամենեւին չփասուիր, միայն թէ շատ շուրջանալով ստալին խտութիւնը չսաստկանայ: Գ. Լաթը չայրիւր թէ որ ստալորի մէջ (խտութիւնը ըլլալով 2,070) եփուի: Դ. Լաթը ժամ կրոյ քլորաջրի մէջ թաթախ կենալով՝ ոչ կ'այրի ոչ կը փասուի: Ե. Լաթը ուժը ժամ միակերպ ծծմբի կամ հիտրոքլորի թթուաջրոյ մէջ կենալով (խտութիւնը 1,035) ամենեւին չփասուիր:

Կը շարունակուի:

(ԾԾՆ.) Լողարանաց չափն այս է

|              |                                                                                                                                                                                                                          |
|--------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1 Քլորաջուր  | <div> <div>Կրոյ քլորաւոր (chlorure de chaux) <math>\frac{1}{2}</math> (կէս) քիլոկրամ.</div> <div>Ջուր 30 լիդր:</div> </div>                                                                                              |
| 2 Ծծմբաջուր  | <div> <div>Ծծմբային թթու 6 <math>\frac{1}{2}</math> կամ 7</div> <div>Ջուր 100.</div> </div>                                                                                                                              |
| 3 Ալքալաջուր | <div> <div>Սոտայ կամ Բողաս 2</div> <div>Ջուր 100</div> </div>                                                                                                                                                            |
| 4 Կրաջուր    | <div> <div>Կիր 1 քիլոկրամ</div> <div>Ջուր երեսուն բաւասուն քիլոյ լաթ թրջելու չափ: Կիրը առաջ քիչ ջրով յարելու է, ետքը մաղէ անցնելու. և յետ այնորիկ լաթը թրջելու բաւական ըլլալու չափ ջուրը վրան աւելցնելու է:</div> </div> |

## ՕԳՏԱԿԱՐ ԳԻՒՏԵՐ

Ծրարած կարագը լաւցրնել:

Ուիշտ անունով անգղիացի բնալոյծ մը հետեւեալ հնարքը կը բանեցնէ ծթած կարագը լաւցրնելու: Պէտք է կ'ըսէ, թարմ կաթով լաւ մը շաղուել զայն և ետքէն զուտ ջրով. և այսպէս կարագը թարմ ու մաքուր համմը կ'առնու, իբր թէ նոր շինուած ըլլար: Այս բանիս պատճառն է, կ'ըսէ, որովհետեւ կարագային թթուն, ուսկից ծթածութեան հոտն ու համը առաջ կու գայ, շուտ մը թարմ կաթին մէջ կը լուծուի, որով այս ծթածութիւնը կ'անցնի: